28
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2019

Luys Լույս®

ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

2. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈԴԵԼԸ 1

2.1. Փաստահավաք հանձնաժողովների ստեղծման միջազգային պրակտիկան 1

2.2. Փաստահավաք հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության հիմնավորումը Ռազմավարությունում 3

3. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 5

3.1. Փաստահավաք հանձնաժողովների գործառույթները միջազգային պրակտիկայում 5

3.2. Փաստահավաք հանձնաժողովի գործառույթները՝ ըստ Ռազմավարության 6

4. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ 7

5. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ 9

6. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 10

7. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 11

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2019թ. հոկտեմբերի 10-ին հաստատվեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն)[1], որն անցումային արդարադատության իրականացման շրջանակներում որպես ռազմավարական միջոցառում նախատեսում է փաստահավաք հանձնաժողովի ստեղծում: Փաստահավաք հանձնաժողովը նախատեսվում է ձևավորել 2020թ. առաջին եռամսյակում:

Փաստահավաք հանձնաժողովները կամ ինչպես ընդունված է անվանել միջազգային պրակտիկայում՝ ճշմարտության հանձնաժողովները (Truth Commision) անցումային արդարադատության իրականացման հիմնական մեխանիզմներից են: Այս հանձնաժողովները պաշտոնական, ժամանակավոր, արտադատական փաստահավաք մարմիններ են, որոնք հետաքննություն են իրականացնում անցյալում տեղի ունեցած մարդու իրավունքների կամ մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների կապակցությամբ: Նման հանձնաժողովների գործունեության նպատակը մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստեր հավաքելն ու դրանց հիման վրա զեկույցներ պատրաստելն է, որոնք կարող են ունենալ լրացուցիչ օժանդակող բնույթ:

Ստորև ներկայացվում է Ռազմավարությամբ նախատեսված փաստահավաք հանձնաժողովի մոդելի և դրա համատեքստում միջազգային փորձի համեմատական վերլուծություն՝ փաստահավաք հանձնաժողովի ստեղծման նպատակահարմարության, դրա պատշաճ գործառնության կառուցակարգերի և ֆինանսավորման տեսանկյունից:

2. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՈԴԵԼԸ

2.1. Փաստահավաք հանձնաժողովների ստեղծման միջազգային պրակտիկան

Միջազգային պրակտիկայի և դրանց վերաբերյալ մի շարք փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես անցումային արդարադատությունը, այնպես էլ դրա կիրառման մեխանիզմներից փաստահավաք հանձնաժողովները հատուկ են քաղաքացիական պատերազմի և/կամ ամբողջատիրական

[1] Նախագիծը մատչելի է https://www.e-gov.am/sessions/ հղումով, Կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգի 52-րդ կետ (այցելվել է 16.10.2019թ.):

կառավարման հետևանքով կեղեքված պետություններին[2]: Նման երկրներում փաստահավաք հանձնաժողովների քննությանն են վերապահվում մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտումների (խոշտանգումներ, ցեղասպանություն, մարդկանց անհետացումներ, մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ), միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների և պատերազմական հանցագործությունների վերաբերյալ հարցերը:

Այսպես, փաստահավաք հանձնաժողովների ստեղծման միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վեր է հանում հետևյալ պատկերը.

- **Էկվադորում** ճշմարտության հանձնաժողովը ստեղծվել էր՝ քննելու մի քանի հարյուր մարդկանց անհետացման չբացահայտված դեպքերը, 1980-ականներին քաղաքական դրդապատճառներով կատարված սպանությունները:
- **Քենիայում** 2007թ. տեղի ունեցած նախագահական ընտրությունների կեղծումը առաջացրել էր էթնիկ խմբերի բախում, որը հետագայում աճեց՝ վերածվելով հասարակության լայն շրջանակների բուռն բախումների: Բախումների հետևանքով սպանվեց շուրջ 1 500 մարդ, իսկ 300 000 հոգի ստիպված եղավ տեղափոխվել իրենց բնակավայրերից: Տեղի ունեցած դեպքերի համատեքստում Քենիայում ստեղծվեց ճշմարտության հանձնաժողով:
- **Մավրիկիոսում** ստեղծված հանձնաժողովը առանձնահատուկ է նրանով, որ վերջինիս քննությանն է ենթակա եղել սոցիալ-տնտեսական բնույթի հարցեր, մասնավորապես՝ ստրկության վերաբերյալ, և ընդգրկել է աշխարհում ստեղծված նման հանձնաժողովներից ամենաերկար ժամանակահատվածը՝ 1638-2008 թթ., շուրջ 370 տարի:
- **Սողոմոնի կղզիներում** երկու զինված խմբավորումների միջև իշխանության բաժանման և հողերի համար պայքարի արդյունքում, որն իր գագաթնակետին հասավ 1998թ., զոհվեց շուրջ 100 մարդ, իսկ 20 000-ը՝ տեղահանվեց: Խորհրդարանի կողմից ստեղծված ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովի նպատակն էր վերոհիշյալ դեպքերի ուսումնասիրությունը:
- **Տոգոյում,** երկրի նախագահի շուրջ 38 տարվա (1967-2005) պաշտոնավարումից հետո, իշխանությունը երկրի նոր ղեկավար հռչակեց

[2] Տե՛ս Office of the United Nations High Commissioner for Human Right, Rule-of-law Tools for Post-conflict States: Truth Commissions, էջ 1, HR/PUB/06/1, հրապարակվել է 2006թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf (այցելվել է 16.10.2019թ.):, տե՛ս նաև United Nations, Guidance Note Of The Secretary-General United Nations Approach to Transitional Justice https://www.un.org/ruleoflaw/files/TJ_Guidance_Note_March_2010FINAL.pdf, էջ 2, հրապարակվել է 2010թ. մարտին (այցելվել է 16.10.2019թ.):

վերջինիս որդուն: 2005թ. տեղի ունեցած ընտրություններից հետո, որի արդյունքները չճանաչվեցին ընդդիմության կողմից, տեղի ունեցան զանգվածային բողոքի ցույցեր: Ցույցերի ցրման ընթացքում սպանվեց շուրջ 500 ցուցարար:

2.2. Փաստահավաք հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության հիմնավորումը Ռազմավարությունում

Ռազմավարությունում Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների զանգվածային խախտումների առկայությունը և դրանով պայմանավորված փաստահավաք հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորվում է մի շարք միջազգային կառույցների և ՀՀ քաղաքացիական հասարակության կողմից հրապարակված զեկույցներով:

Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ այդ զեկույցները չեն պարունակում այնպիսի տեղեկություններ կամ գնահատականներ, որոնք թույլ կտային փաստելու Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների զանգվածային խախտումների առկայությունը: Զեկույցները, անշուշտ, առանձին դեպքերում իրենց մեջ պարունակում են քննադատություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության իշխանություններին, սակայն միաժամանակ բազմաթիվ դեպքերում փաստում են տեղի ունեցող դրական բարեփոխումները:

Այսպես, օրինակ, Ռազմավարությամբ մեջբերվում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից հրապարակված 2008թ. մարտի 1-ի դեպքերի հետ կապված բանաձևը[3]: Նախ նշենք, որ այս բանաձևը վերաբերում է կոնկրետ 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած դեպքերին և չի կարող վկայակոչվել որպես մարդու իրավունքների զանգվածային և շարունակական խախտման դեպքերը փաստող արձանագրություն: Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ այս դեպքերի հետ կապված՝ հարուցված է եղել և ներկայումս էլ հարուցված է քրեական գործ և իրականացվում է քննություն, որը բացառում է այս հարցի քննարկումը փաստահավաք հանձնաժողովի կողմից: Ռազմավարությամբ նույնպես սահմանված է, որ փաստահավաք հանձնաժողովը չի կարող ունենալ իրավապահ կամ դատական մարմնին բնորոշ գործառույթներ:

Ռազմավարությամբ մեջբերվող հաջորդ փաստաթուղթը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ)

[3] Parliamentary Assembly, Resolution 1609 (2008) adopted by the Assembly on 17 April 2008 (16th Sitting), հասանելի է հետևյալ հղումով՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17643&lang=en (այցելվել է 16.10.2019թ.):

կողմից 2010թ. հրապարակված զեկույցն է[4]: Զեկույցը վերաբերում է 2008-2009թթ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված քրեական արդարադատության մշտադիտարկումների վերջնարդյունքին: Այստեղ նույնպես առկա է քննադատություն՝ կապված 2008թ. մարտի 1-ի դեպքերին հաջորդող դատավարական որոշակի բացթողումների հետ, սակայն զեկույցը մեծ մասամբ նպատակ ուներ վեր հանել ՀՀ դատական համակարգում առկա կառուցվածքային թերությունները և կատարել արդարադատության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Ի վերջո, Հայաստանի Հանրապետությունը 2001-ից Եվրոպայի խորհրդի անդամ է և 2001թ. վավերացրել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա): Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ-ում մարդու իրավունքների կոպիտ խախտումները և դատական համակարգի բացթողումները արձանագրվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից: Այսպիսով ՄԻԵԴ-ում Հայաստանի դեմ կայացվող վճիռների քանակը և վիճակագրությունը կարելի է դիտարկել որպես յուրահատուկ ցուցանիշ, որը արտացոլում է երկրում արդարադատության մակարդակը: ՄԻԵԴ-ի կողմից հրապարակած վիճակագրության համաձայն,[5] որն ընդգրկում է 1959-2018թթ. ընկած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետության դեմ կայացվել է ընդհանուր 103 վճիռ: Կայացված վճիռների քանակը և դրանցում արձանագրված խախտումների բնույթը նույնպես փաստում են այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում տեղի չեն ունեցել մարդու իրավունքների զանգվածային և կոպիտ խախտումներ. օրինակի համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Ֆինլանդիայի դեմ կայացվել է 188, Հունգարիայի դեմ՝ 510, իսկ Վրաստանի դեմ՝ 90 վճիռ:

Փաստահավաք հանձնաժողովի ստեղծման պատճառներից մատնանաշվում է նաև ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների գործերի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությունը՝ վկայակոչելով «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին»[6] ծրագրի կողմից ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը: Սակայն, Ռազմավարությամբ որևէ կերպ չի հիմնավորվում,

---

[4] Organization for Security and Co-operation in Europe, Office for Democratic Institutions and Human Rights Final Report Trial Monitoring Project in Armenia (April 2008 – July 2009), 8 march 2010, հասանելի է հետևյալ հղումով https://www.osce.org/odihr/41695?download=true (այցելվել է 16.10.2019թ.):

[5] Տե՛ս European Court of Human Rights, Violations by Article and by State 1959-2018, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.echr.coe.int/Documents/Stats_violation_1959_2018_ENG.pdf (այցելվել է 16.10.2019թ.):

[6] «Ապահով զինվորներ՝ անվտանգ Հայաստանին» ծրագիրը իրականացվել է նիդեռլանդական PAX կազմակերպության աջակցությամբ գործող «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի միջոցով:

թե ինչո՞ւ նշված գործերի պատշաճ քննությունը հնարավոր չէ իրականացնել քրեական վարույթի շրջանակում և արդյո՞ք արձանագրված խախտումները այն աստիճանի զանգվածային են, որ փաստահավաք հանձնաժողովի ստեղծման հիմք դառնան:

3. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1. Փաստահավաք հանձնաժողովների գործառույթները միջազգային պրակտիկայում

Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (այսուհետ՝ ԱԱՄԿ[7]) առանձնացնում է փաստահավաք հանձնաժողովների 3 հիմնական գործառույթ[8].

- **Փաստերի հաստատում և մեկնաբանություն**. Փաստահավաք հանձնաժողովների հիմնական առաքելությունը փաստերի բացահայտումն է, բռնության դեպքերի վերհանումը, որոնք եղել են վիճելի կամ ժխտված: Նման հանձնաժողովները տարբերվում են իրենց մանդատով՝ կախված բացահայտման ենթակա փաստերի ծավալից, դրանց իրավական որակումից և բացահայտման խորությունից:
- **Զոհերի իրավունքների պաշտպանություն, ճանաչում և վերականգնում**. Քննիչ հանձնաժողովները իրենց աշխատանքները կենտրոնացնում են զոհերի իրավունքների շուրջ, ինչով էլ տարբերվում են դատարաններից և խորհրդատվական մարմիններից:
- **Քաղաքական և սոցիալական դրական փոփոխություններ**. Որոշ հանձնաժողովներ լիազորված են լինում կառավարությանը և հասարակությանը առաջարկություններ ներկայացնելու մանդատով: Առաջարկությունները վերաբերում են փոխըմբռնման և հաշտեցման եզրեր գտնելուն, բարեփոխումներին, որոնք կնպաստեն ժողովրդավարության հաստատմանը և հանձնաժողովի ստեղծման համար պատճառ դարձած՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեպքերի հետագա բացառմանը:

---

[7] ICTJ was established in March 2001 at the suggestion of the Ford Foundation to explore strategies for helping societies focus on the rights of victims in dealing with legacies of massive human rights abuses and pursuing the search for sustainable peace.

[8] Տե՛ս Eduardo González and Howard Varney, eds., Truth Seeking: Elements of Creating an Eff ective Truth Commission. (Brasilia: Amnesty Commission of the Ministry of Justice of Brazil; New York: International Center for Transitional Justice) 2013. էջ 9, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Book-Truth-Seeking-2013-English.pdf (այցելվել է 16.10.2019թ.):

3.2. Փաստահավաք հանձնաժողովի գործառույթները՝ ըստ Ռազմավարության

Ռազմավարությամբ նախատեսվում է, որ փաստահավաք հանձնաժողովը քննելու է 1991-2018թթ.՝ 27 տարվա ժամանակահատվածում կատարված հետևյալ խախտումները.

- 1991 թվականի սեպտեմբերից ի վեր տեղի ունեցած բոլոր ընտրական գործընթացներ,
- 1991 թվականի սեպտեմբերից ի վեր հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,
- պետության կամ հասարակության կարիքների համար գույքի հարկադիր օտարումներ,
- սեփականազրկումների այլ դրսևորումներ,
- ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողներ:

Նախատեսվում է քննությունը իրականացնել 2 տարում՝ 1 տարով երկարացնելու հնարավորությամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս կապակցությամբ չկա միասնական պրակտիկա և յուրաքանչյուր երկիր այդ ժամանակահատվածը որոշում է ինքնուրույն՝ հաշվի առնելով թե, օրինակ, երբ են տեղի ունեցել պատերազմական գործողությունները, հասարակական բախումները կամ մարդու իրավունքների խախտման ամենաշատ դեպքերը:

Ռազմավարությունը փաստահավաք հանձնաժողովի գործունեության նպատակ է սահմանում **«իրավապահ և արդարադատության համակարգերի գործունեության ընթացքում դրանց սահմանադրական նպատակների տևական խեղաթյուրման հետևանքների վերացումը և քաղաքացիական համերաշխության վերականգնումը»:**

Ռազմավարության համաձայն՝ օրենքով կարող է նախատեսվել ենթադրյալ խախտումներ կատարած անձանց ինքնակամ ներկայանալու և էական նշանակություն ունեցող տեղեկություններ տալու դեպքում նրանց **«հնարավոր քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տալու»** հնարավորություն:

Ռազմավարությամբ հանձնաժողովին վերապահվելիք վերոհիշյալ լիազորությունը բովանդակային առումով համընկնում է միջազգային պրակտիկայում հանդիպող 2 մեխանիզմի.

- **Օգտագործումից անձեռնմխելիություն (*use immunity*[9])**, որի դեպքում անձին չի տրվում դատական անձեռնմխելիություն: Միայն երաշխավորվում է, որ այն

[9] Տե՛ս Rule-of-law Tools for Post-conflict States: Truth Commissions, էջ 10:

տեղեկությունները, որոնք անձը հայտնել է հանձնաժողովին, հետագայում որպես ապացույց չի կարող օգտագործվել իր դեմ:

- **Ներման շնորհում (amnesty)**. Միջազգային պրակտիկայում առաջին ճշմարտության հանձնաժողովը, որին տրվել էր նման լիազորություն, Հարավային Աֆրիկայի ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովն էր[10]: Այդուհանդերձ, «Ամնեսթի Ինթերնեյշնլի» կողմից իրականացված հետազոտության համաձայն[11], որն ընդգրկում է 1974-2010թթ. ամբողջ աշխարհում ստեղծված մի շարք նման հանձնաժողովներ, պարզվել է, որ միայն 3 հանձնաժողովի է վերապահված եղել ներում շնորհելու լիազորություն: ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը Քենիա կատարած այցի վերաբերյալ իր զեկույցում նշում է, որ այն անձինք, ովքեր կատարել են մարդու իրավունքների կոպիտ խախտում, ոչ մի դեպքում չպետք է առաջադրվեն ներում շնորհելու համար[12]:

Խնդրահարույց է Ռազմավարությամբ հանձնաժողովին վերապահվելիք մեկ այլ գործառույթ, այն է՝ դատական և իրավապահ մարմինների գործունեության ուսումնասիրության մեթոդաբանության մշակման և այդ գործունեությանը գնահատական տալը: ՀՀ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի[13] 139-րդ հոդվածով արդեն իսկ նախատեսվում է դատավորների գործունեության գնահատում, որի մեթոդաբանությունը և գնահատումը իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը: Անհասկանալի է, թե ի՞նչ լրացուցիչ մեթոդաբանության մասին է խոսքը, և արդյո՞ք դա չի հանգեցնի դատական իշխանության անկախության նկատմամբ միջամտության:

4. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Փաստահավաք հանձնաժողովի գործունեության արդյունավետության և դրա հաջողության ամենագլխավոր նախապայմաններից մեկը հանձնաժողովի կազմն է: Հանձնաժողովի անդամները պետք է լինեն հասարակության մեջ վստահություն վայելող, բոլոր կողմերի համար ընդունելի և անհրաժեշտ գիտելիքներով օժտված անձինք, ինչը երաշխիք է, որ հանձնաժողովի գործունեության վերջնարդյունքը

---

[10] Տե՛ս Truth and Reconciliation Commission of South Africa. Government of South Africa, Promotion of National Unity and Reconciliation Act 34 of 1995, July 19, 1995, www.justice.gov.za/legislation/acts/1995-034.pdf.

[11] Տե՛ս Amnesty International, Truth Commissions and Criminal Justice, POL 30/004/2010, հրապարակվել է 2010թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.jep.gov.co/Sala-de-Prensa/Documents/Comisiones%20verdad.pdf (այցելվել է 16.10.2019 թ.):

[12] Տե՛ս UNITED NATIONS HIGH COMMISSIONER FOR HUMAN RIGHTS, Report from OHCHR Fact-finding Mission to Kenya, 6-28 February 2008 , CH-1211, էջ 17, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/Documents/Press/OHCHRKenyareport.pdf (այցելվել է 16.10.2019 թ.):

[13] Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2018թ. ապրիլի 9-ին, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368), հոդ.143, ՀՕ-95-Ն:

լինի արժանահավատ և ընդունելի բոլոր կողմերի համար: Միջազգային պրակտիկայում հանդիպում են նաև դեպքեր, երբ հանձնաժողովի կազմում շահերի բախումները կանխելու, կորպորատիվ շահերը հավասարակշռելու, անկախությունը և օբյեկտիվությունը երաշխավորելու համար ընդգրկվում են նաև օտարերկրյա հեղինակավոր մասնագետներ: Այդպիսի փորձի օրինակ է Սիեռա Լեոնեում ձևավորված հանձնաժողովի կազմը, երբ, բացի տեղացի անդամներից, հանձնաժողովի աշխատանքներում ներգրավվեցին նաև միջազգային կառույցներից հեղինակավոր մասնագետներ: Սակայն սա ունի նաև իր թերի կողմերը. օրինակ՝ առանձին դեպքերում օբյեկտիվ քննություն իրականացնելու համար անհրաժեշտ է որոշակի պատմական գիտելիքների և տեղեկատվության իմացություն, որին համապատասխան օտարերկրյա մասնագետները կարող են չտիրապետել:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանձնաժողովի անդամին վերապահվող չափանիշները պետք է սահմանվեն օրենքով, որի հիման վրա նա ստեղծվում է: Օրենքը պետք է առնվազն պարունակի անդամների բարեվարքության, փորձառության և քաղաքական չեզոքության վերաբերյալ չափանիշներ: Հստակորեն սահմանվում են նաև անդամների ընտրության կարգը:

Փաստահավաք հանձնաժողովի անդամների ընտրության մեխանիզմի հաջողված օրինակ էր Սիեռա Լեոնեում ստեղծված հանձնաժողովը: Այստեղ անդամների ընտրության համար ստեղծվել էր ընտրական հանձնաժողով, որի աշխատանքները համակարգում էր ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ հանձնակատարը: Ընտրական հանձնաժողովը կազմված էր հակամարտող կողմերի, նախագահի, կրոնական համայնքի և իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչներից: Ընտրական հանձնաժողովը հանրային առաջադրումների և հարցազրույցների հիման վրա ընտրեց ճշմարտության հանձնաժողովի տեղացի 4 անդամների և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կողմից առաջադրված 3 օտարերկրացի անդամների:

Լիբերիայում ճշմարտության հանձնաժողովի անդամները ընտրվեցին անցումային կառավարության կողմից՝ կարճատև քննարկումների արդյունքում: Այսպիսի մոտեցումը ենթարկվեց բազմաթիվ քննադատությունների, որի արդյունքում ընտրված անդամները ընտրական հանձնաժողովի կողմից ենթարկվեցին վեթինգի: Արդյունքում այդ անդամներից միայն երկուսը վերահաստատվեցին իրենց պաշտոններում:

Ինչ վերաբերում է հանձնաժողովի անդամների թվին, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը նշում է[14], որ հանձնաժողովի անդամների թվի վերաբերյալ չկա ընդունված չափորոշիչ: Յուրաքանչյուր պետություն անդամների թիվը և դրանում օտարերկրյա մասնագետների ներգրավումը որոշում է ինքնուրույն: Հանձնաժողովների մեծ մասը ունենում է 3-17 անդամ: Չնայած պետք է սպասել, որ հանձնաժողովի անդամները գործեն համաձայնությամբ, անհրաժեշտ է սահմանել անդամների կենտ թիվ՝ ժողովրդավարական որոշումների կայացումը ապահովելու համար[15]:

Ռազմավարությամբ առաջարկվում է ձևավորել առավելագույնը **20 անդամից** բաղկացած հանձնաժողով, սակայն անդամների ընտրության մեխանիզմին և վերջիններիս ներկայացվող կոնկրետ պահանջներին որևէ անդրադարձ չկա, ինչը թույլ չի տալիս դատողություններ անել այս մարմնի անկախության և գործառնության բավարար ինստիտուցիոնալ երաշխիքների մասին:

5. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Կախված երկրից և այն նպատակներից (քննության ժամանակահատված, քննության ենթակա հանցագործությունների տեսակներ, վկաների թիվ և այլն), որն իր առջև դրել է հանձնաժողովը, համապատասխանաբար տարբեր է նաև հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցների թիվը: Նմանատիպ հանձնաժողովները պետք է առնվազն ունենան փորձագետներ մարդու իրավունքների ոլորտում, իրավական ոլորտում, վերլուծաբաններ, սոցիալական բնույթի մասնագետներ, տեխնիկական սպասարկման անձնակազմ և բազմաթիվ այլ աշխատակիցներ: Հանձնաժողովի բնականոն գործունեության համար նաև շատ կարևոր է աշխատակազմի ճիշտ և արդյունավետ կառավարումը, որը իրականացվում է գործադիր տնօրենի կամ դրա համար պատասխանատու այլ անձի միջոցով: Վերջին շրջանում ձևավորված հանձնաժողովներում աշխատակազմի աշխատակիցների թիվը կազմել է մոտավորապես 200-500 մարդ[16]:

Ռազմավարությամբ անդրադարձ չի կատարվել փաստահավաք հանձնաժողովի աշխատակազմին և պարզ չէ, թե արդյո՞ք հանձնաժողովը ունենալու է աշխատակազմ, տարածքային մարմիններ, թե՞ ոչ:

---

[14] Տե՛ս International Center for Transitional Justice, Drafting a Truth Commission Mandate A Practical Tool, էջ 13:

[15] Տե՛ս International Center for Transitional Justice, Elements of Creating an Eff ective Truth Commission, էջ 18, հասանելի է հետևյալ հղմամբ՝https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Book-Truth-Seeking-2013-English.pdf (այցելվել է 16.10.2019 թ.):

[16] Տես International Center for Transitional Justice, Drafting a Truth Commission Mandate A Practical Tool, էջ 15:

Հանձնաժողովների աշխատակազմերի աշխատակիցների թվերի ցուցանիշներ				
400 և ավելի աշխատակից	**201-400 աշխատակից**	**101-200 աշխատակից**	**51-100 աշխատակից**	**մինչև 50 աշխատակից**
Քենիա	Լիբերիա	Գանա	Արգենտինա	Էլ Սալվադոր
Պերու	Մարոկկո	Գվատեմալա	Չիլի	Ուգանդա
Արևելյան Թիմոր	Սիեռա Լեոնե	Պարագվայ	Էկվադոր	
	Հյուսիսային Աֆրիկա		Հայիթի	
	Հյուսիսային Կորեա			

6. ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հիմնական խնդիրներից մեկը, որին մշտապես բախվում են հանձնաժողովները իրենց գործունեության ընթացքում, անհրաժեշտ չափի ֆինանսավորման բացակայությունն է: Այսպիսի հանձնաժողովի համար միջին հաշվով անհրաժեշտ է լինում 5 միլիոն ԱՄՆ դոլար, որը շատ դեպքերում ավելանում է՝ անցնելով նույնիսկ 12 միլիոնը: Որոշ հանձնաժողովներ ամբողջությամբ ֆինանսավորվում են պետության կողմից, սակայն հանձնաժողովների մեծամասնությունը ստիպված է լինում գտնել ֆինանսավորման աղբյուրներ միջազգային կառույցներից[17]: Օրինակ՝ Գվատեմալայի հանձնաժողովի բյուջեն կազմել է 9,5 միլիոն ԱՄՆ դոլար, որից կառավարությունը ֆինանսավորել է միայն 800 000 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած մասը ստացվել է ավելի քան 13 երկրից և 2 հիմնադրամից:

Միաժամանակ շատ կարևոր է խուսափել, որ հանձնաժողովի ֆինանսավորման՝ պետությունից կախվածությունը օգտագործվի որպես լծակ նրա գործունեության վրա ազդելու համար[18]: Մի շարք երկրներում, օրինակ՝ Հարավային Աֆրիկայում, Գվատեմալայում և Էլ Սալվադորում ֆինանսական միջոցների

[17] Տե՛ս Office of The United Nations High Commissioner for Human Rights, Rule-of-Law Tools for Post-Conflict States Truth Commissions, 2006թ., էջ 1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ohchr.org/Documents/Publications/RuleoflawTruthCommissionsen.pdf, վերջին (այցելվել է 16.10.2019 թ.):

[18] Տե՛ս Priscilla B. Hayner, Unspeakable Truths: Transitional Justice and the Challenge of Truth Commissions, Second Edition, հրապարակվել է 2011թ., էջ 217:

սակավությունը խնդիրներ է առաջացրել հանձնաժողովի բնականոն գործունեության համար[19]:

Ռազմավարությամբ չկա անդրադարձ նաև հանձնաժողովի ֆինանսավորման հարցին՝ չնայած միջազգային փորձը ցույց է տալիս ֆինանսավորման մեծ ազդեցություն հանձնաժողովի անկախության և բնականոն գործունեության վրա:

Հանձնաժողովների բյուջեները (ԱՄՆ դոլար)				
25 միլիոն և ավելի	**10-25 միլիոն**	**5-10 միլիոն**	**1-5 միլիոն**	**1 միլիոն և ավելի քիչ**
Կանադա	Պերու	Գվատեմալա	Չիլի	Չադ
Հարավային Աֆրիկա		Լիբերիա	Էլ Սալվադոր	Գրինսբորո
Հարավային Կորեա		Հարավային Կորեա	Գանա	Ուգանդա
			Հայիթի	
			Պարագվայ	
			Սիեռա Լեոնե	

7. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Փաստահավաք հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը հատուկ է **քաղաքացիական պատերազմի և/կամ ամբողջատիրական կառավարման հետևանքով** կեղեքված հասարակություններին, որոնցում տեղի են ունեցել մարդու իրավունքների կոպիտ և զանգվածային խախտումներ (օրինակ՝ **Էկվադոր, Քենիա, Մավրիկոս, Սողոմոնի կղզիներ և Տոգո**):
- Ռազմավարությամբ չի հիմնավորվում 1991-2018թթ. ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների կոպիտ և զանգվածային խախտումների առկայության փաստը, այլ որպես փաստարկ բերվում են միջազգային կառույցների կողմից առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության նկատմամբ հնչեցված որոշ քննադատություններ, որոնք առավելապես կապված են ընտրական գործընթացների հետ: Սակայն շատ կարևոր է նաև նշել, որ նույն միջազգային կառույցների կողմից Հայաստանի Հանրապետությունում անցկացված ընտրությունները որակվել են որպես ժողովրդավար և միջազգային ստանդարտներին համապատասխան:

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 217:

- Ռազմավարությամբ որևէ կերպ չի հիմնավորվում, թե ինչով է պայմանավորված հանձնաժողովի գործունեության 2 տարվա ժամկետը (առավելագույնը ևս 1 տարով երկարացնելու հնարավորությամբ), և որքանով է այն բավարար 27 տարվա ժամանակահատված ընդգրկող փաստերի լիարժեք և արդյունավետ քննություն իրականացնելու համար:
- Ռազմավարության մեջ նշվում է, որ հանձնաժողովը բաղկացած է լինելու 20 անդամից, սակայն չի մանրամասնում դրանց ընտրության մեխանիզմը և ներկայացվող պահանջները: Մինչդեռ փաստահավաք հանձնաժողովի կազմը դրա գործունեության արդյունավետության և վստահելիության առանցքային նախապայման է:
- Հանձնաժողովի արդյունավետ գործունեության մեկ այլ կարևոր նախապայման է համապատասխան մասնագիտական ունակություններ ունեցող, բավարար թվով աշխատակիցներով աշխատակազմը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աշխատակազմերը միջին հաշվով ունենում են 200-500 աշխատակից: Այս առումով Ռազմավարությունը նույնպես մանրամասներ չի տալիս:
- Ռազմավարությունը չի ներկայացնում որևէ հաշվարկ հանձնաժողովի ստեղծման և գործունեության համար նախատեսվող բյուջեի մասով: Նման հանձնաժողովների համար նախատեսվող բյուջեն միջին հաշվով կազմում է առնվազն 5 միլիոն ԱՄՆ դոլար: Չի նշում նաև, թե նախատեսվող ծախսերը ում կողմից, ինչ միջոցներով են ֆինանսավորվելու:
- Փաստահավաք հանձնաժողովին վերապահվում է **հնարավոր քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տալու** լիազորություն, որը միջազգային պրակտիկայում քննադատվում է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*